



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Մայիս 2, 1990

Մեծայարգ  
Տիար Նուպար Տօրեան  
Ս. Խաչ Եկեղեցոյ  
Ծխական Խորհուրդի Աստեճապետ  
Եռնիքն Սիթի.

Մեծայարգ Տիար Տօրեան,

Մայիս 2-ին ստացուեցաւ Փետրուար 10, 1990 թուակիր ձեր նամակը:

Այս նամակով կը տեղեկացնէք թէ Փետրուար 4-ին, 1990, տեղի ունեցած է համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի հինգ անդամները: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացումը:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Հարըլտ Ազմէլեան  
Զաւէն Տովսէփեան  
Ծան Մալույ  
Նուպար Տօրեան  
Ֆիլիփ Արփիարեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթարար

*Խաչիկ Վրդ. Պարսամեան*

Խաժակ Վրդ. Պարսամեան  
Առաջնորդի Փոխանորդ



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Մայիս 1, 1990

Մեծայարգ  
Տիար Էսկրր Մոսէսեան  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Հէյվըրհիլ.

Յարգելի Տիար Մոսէսեան,

Ստացուած է Ապրիլ 27, 1990 թուակիր ձեր նամակը:

Այս նամակով կը տեղեկացնէք թէ Մարտ 18-ին, 1990, տեղի ունեցած է համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի երկու անդամները: Կու տաք բուեարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացումը:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Ռիչըրտ Տէվէճեան  
Փօլին Հերեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

*Խաժակ Վր. Պարսամեան*

Խաժակ Վր. Պարսամեան  
Առաջնորդի Փոխանորդ



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 518  
Յուլիս 26, 1991

Մեծայարգ  
Տիար Էտկըր Մոսէսեան  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Հէյվըրհիլ.

Յարգելի Տիար Մոսէսեան,

Ստացած ենք Յունիս 18, 1991 թուակիր ձեր նամակը եւ Եկեղեցւոյ տեղեկագիրները, որոնց համաձայն Ապրիլ 3, 1991-ին գումարած համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին ընտրուած է Ծխական Խորհուրդին մէկ անդամ:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Մայքըլ Դաքէսեանի ընտրութիւնը որպէս անդամ Ծխական Խորհուրդի:

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովին ներկայացուած Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի նաեւ Ատենադպիրին կողմէ, եւ կատարուած որեւէ ընտրութիւն պէտք է ըլլայ գաղտնի քուէարկութեամբ՝ համաձայն Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Կը մաղթենք որ Տէրը Իր հովանին անպակաս ընէ համայնքիդ անդամներուն վրայէն եւ բոլորիդ եկեղեցանուէր գործերուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 924  
Մայիս 28, 1992

Մեծայարգ  
Տիար Մայքրլ Դաքէսեան  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Հէյվըրհիլ.

Յարգելի Տիար Դաքէսեան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Մարտ 8, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին երեք անդամներ: Կու տար քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Լիզ Տերտերեան  
Տէյվիտ Դաիթեան  
Վազգէն Կոստանեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի, Ծխական Խորհուրդի եւ յանձնախումբերու ընտրութիւնները պէտք է կատարուին երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունիս

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ